ՄԱՆՈՒԿ ԱՒԵՏԱՐԱՆ

«Արդ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմեա ասացէք ստացողի գրոյս մահտեսի Սիրունի և իւր կողակցի Նարկիզին և իւր ծնողաց Կիրակոսին և իւր կողակցոյ Դիլմաթոյ Գրիգորին և իւր կողակցուն Դիլմաթին՝ Յուսէփին և իւր կողակցուն Գորգդյին յիշեցէք և Աստուած, ողորմի ասացէք ամէն»։

«Մահտեսի Սիրունին ստացաւ Ս. Աւետարանս և ետ ի ձեռն Տ. Յովհաննէս Տէր Կիրակոսեանի թուին ՌՃՀԶ»։

«Յիշեցէք ի Քրիստոս մահտեսի Դեղձունն և զիւր Մահ խաթունն և զիւր Շահ խաթունն Աւուծիք մահտեսի Դեղձունին զՏէր Վարդան յիշեցէք երկու կամ երեք անգամ և Աստուած ողորմիա ասացէք իր հանգուցելուն, որ զայս Աւետարան յիշատակ արաւ և ետ ի ձեռն Տ. Աբրահամին յիշատակ Աստուած զմահտեսի Դեղձունին, հոգին լուսաւորէ՝ ամէն»։

«Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմեա՝ ասացէք Մինասին և իւր կողակցուն Ննմանին և իւր եղբայր Ստեփանին որ ծախեաց զայս Ս. և ընտիր Աւետարան ԾԵ ղրշի. ետ Տ. Սահակի որդի Տ. Աբրահամին, ահա ես Մինաս տուի զայս Աւետարան Տ. Սահակին անտաւի անտաւաքար՝ ոչ հայր, ոչ մայր, ոչ եղբայր, ոչ օտար, ոչ դրացի, ոչ հայ, և ոչ քուրդ և ով որ ծախէ կամ գրաւէ կամ հեռացուցանէ ի ձեռանէ Տ. Սահակին, նա զանէծքն Կայէնի առցէ և զմասն Յուդայի և ի Քրիստոսէ անմասն եղցէ ամէն»։

«Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմեա՝ ասացէք Տ. Աբրահամին և իւր կողակցուն Սինուպարին և իր որդի Տ. Սահակին որ բազում աշխատեցաւ, երեք անգամ Շերուան գնաց մօտ Պ. Սալաբէգ նոցա աղբօր ձեռքով եղև այս բան թուին ՌՄԳ»։

«Թուին Տ. Աբրահամին որ փոխեցաւ առ Աստուած ՌՃՂԹ. և նորա որդին Տ. Սահակ օրհնեցաւ թուին ՌՄԲ»։

Աւետարանիս շուշպաններից երկուքը շատ գեղեցիկ սաղանկար ունէին, մետաքսով խաչաձև բանուած, մէ-